ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/48

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Թ. Հովեսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի փողոցներում բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1964-2020 գրությամբ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.02.2020թ.-ի թիվ 01/61-2372 գրության հիման վրա, 13.02.2020թ.-ին «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 14.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/48 համարի ծածկագիրը և 21.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 21.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.03.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երանի քաղաքապետարանը, 11.02.2020թ.-ի թիվ 01/61-2372 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից):

Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

«Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է լիազորագիրը, այսինքն, հայտում էլեկտրոնային ստորագրությունը նշված է «Սամսոն Մարգարյանի» անունով, իսկ (մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)) հատվածում «Սամվել Մելիքսեթյանի» անունով: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին

մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1964-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/48 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի փողոցներում բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքների որակի

տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.12.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ն:

«Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը թիվ 2 հավելվածով հայտնել է, որ ուսումնասիրել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ինչով պայմանավորված ներկայացրել է 158 000 ՀՀ դրամի գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում է լիազորագիրը, մասնավորապես՝ հայտը էլեկտրոնային ստորագրված է «Սամսոն Մարգարյան»-ի կողմից, սակայն «մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» դաշտում նշված է «Սամվել Մելիքսեթյան»-ի անունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 04.02.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի goldnetltd@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է հայտուն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում՝ կցելով նաև 03.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությունը:

Հանձնաժողովի 06.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամանակահատվածում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ Կարգի 42-րդ կետի համաձայն:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1964-2020 գրությամբ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ … հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝

լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատաս-խանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ

մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի փողոցներում բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.12.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով բաց ընթացակարգ մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը թիվ 2 հավելվածով հայտնել է, որ ուսումնասիրել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ինչով պայմանավորված ներկայացրել է 158 000 ՀՀ դրամի գնային առաջարկ:

Հանձնաժողովի 03.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում է լիազորագիրը, մասնավորապես՝ հայտը էլեկտրոնային ստորագրված է «Սամսոն Մարգարյան»-ի կողմից, սակայն «մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» դաշտում նշված է «Սամվել Մելիքսեթյան»-ի անունը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 04.02.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի goldnetltd@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է

հայտուն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցում՝ կցելով նաև 03.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությունը:

Հանձնաժողովի 06.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամանակահատվածում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ Կարգի 42-րդ կետի համաձայն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով արձանագրված անհամապատասխանությունների շտկումները, խախտել է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1964-2020 գրությամբ «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/48 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**